

որ "բժշկական գործողութեան ենթարկուած էր, եւ գրեթէ մէկ ամիսով առանձնացած":

Եւ այս պատեհութեամբ կարողացած էր հանդիմանալ գիրքեր կարդալ՝ 1500 էջ, եւ վերանայիլ "Կոմիտասի Հանճարը" իր աշխատասիրութեան երկրորդ հատորի ձեռագիրը: Այս ամբողջ ներկաները առանձնապէս մօտեցան Պատրիարք Սրբազան Հօր, որ գուարթ տրամադրութեամբ եւ շնորհակալութեամբ

ընդունեց բոլորին մաղթանքը: Բարի գտնուած շրջանին, Պատրիարք Հայրը առիթ ունեցաւ տեսակցելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Վեհափառին հետ, որ նոյնպէս ստիպողաբար բժշկական ֆննդութեանց ենթարկուեցաւ, հոգատարութեամբ Տֆ. Վիգէն Կարապետեանի, եւ յետագեց դէպի էջմիածին իր ճամբորդութիւնը, եւ ապաֆինման շրջանէ մը յետոյ վերադարձաւ իր Միաբանութեան, Անթիլիաս:

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՔԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

Սրբոց Թարգմանչաց Մանկապարտեզի ամսվերջի հանդէսը տեղի ունեցաւ Մայիս 30ին, ժառ. Վարժարանի սրահին մէջ, նախագահութեամբ դպրոցի Տեսուչ Գեորգի Ս. Կիրեղ Եպս. Գաբրիէանի: Մանկապարտեզի 36 մանուկներ, իրենց ուսուցիչներուն դիմաւորութեամբ, գուարճացուցին իրենց ծնողները եւ ներկաները իրենց երգերով, պարերով եւ արտասանութիւններով: Անոնցմէ տասը շրջանաւարտութեան վկայական ստացան տեսուչ Սրբազանի ձեռքէն:

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Ամսվերջի հանդէսը տեղի ունեցաւ 6 Յունիս, Կիրակի երեկոյեան ժամը 6.30ին, Թարգմանչաց Վարժարանի սրահին մէջ, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր: Ներկայ էին Միաբանութեան անդամներ, աշակերտութեան ծնողներ եւ կոկիկ հասարակութիւն մը:

Յայտագրին առաջին մասին մէջ աշակերտներ երգեցին եւ արտասանեցին,

եւ աւարտական դասարանը (երեք մանչ եւ երկու աղջիկ) ներկայացուց Անի քաղաքին քաղաքական, պատմական եւ ճարտարապետական արժէքները: Տեսուչ Սրբազանի տարեկան տեղեկագրէն յետոյ, հինգ շրջանաւարտ աշակերտներ ստացան իրենց վկայականները: Իւրաքանչիւր դասարանի յաջողագոյն աշակերտներ ստացան իրենց մրցանակները:

Պատրիարք Սրբազան Հայրը իր յորդորական խօսքին մէջ շեշտեց կարեւորութիւնը գիտութիւն եւ ուսում առնելուն հետ նաեւ կրթութիւն, դաստիարակութիւն ստանալուն: "Ուսում ունի քայց կրթութիւն չունի" խօսքը կ'ակնարկէ յարգանքին եւ հաւատարմութեան, զոր անհատ մը պէտք է ունենայ բարոյական եւ կրօնական հաւատալիքներու եւ սկզբունքներու հանդէպ: Ո՞վ կրնայ եւ ո՞վ պէտք է կրթութիւն տայ: Ընտանի՞քը, դպրո՞ցը, պետութիւնը, եկեղեցի՞ն: Երուսաղէմի մէջ պարտականութիւնն է այդ՝ գործակցաբար ընտանիքին, Սրբոց Յակոբեանց Վանքի Դպրոցին եւ եկեղեցիին, Միաբանութեան:

Պատրիարք Սրբազան Հայրը յայտնեց նաեւ թէ տարւոյն ընթացքին, Գալիֆորնիայէն Սրբոց Թարգմանչաց Սանուց Միութեան առաջադրանքով եղած Շարադրութեան մրցոյթին մասնակցած էին 18 աշակերտներ հայերէնով եւ 11 աշակերտներ Անգլերէնով, եւ անոնց մէջէն ընտրուած էին՝ մէկ հոգի առաջին, երկու հոգի երկրորդ, եւ երեք հոգի երրորդ մրցանակներով, եւ Միութեան դրամական նուէրները փոխանցուեցան աշակերտներուն:

Սուրբ Աթոռոյ մաղթերգով եւ խմբական "Հայր Մեր"ի երգեցողութեամբ հանդէսը փակուեցաւ 9.15ին:

Ժառանգաւորաց Վարժարանի ամսվերջի Հանդէսը տեղի ունեցաւ 13 Յունիս, Կիրակի, ժամը 7.30ին, Ալեք եւ Մարի Մանուկեան սրահին մէջ: Վարժարանի հսկողութեան գործը, երեք մասի բաժնուած, յանձնուած էր՝ Կրթական բաժինը Հոգ. Տ. Գուսան Վրդ. Ալմանեանի, Հոգատարութիւնը Հոգ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեանի, եւ Կարգապահութիւնը դաստիարակ Պր. Արտեմ Սարգսեանի, որ կատարեց բացման խօսքը հանդէսին, ներկայացնելով անցնող տարեշրջանի աշխատանքները, մանաւանդ 1992 Դեկտեմբեր 29էն յետոյ, երբ յիսուն նոր աշակերտներ ժամանեցին Հայաստանէն:

Յայտագրին առաջին մասին մէջ աշակերտները արտասանեցին, դաշնամուրի վրայ նուագեցին, եւ երաժշտութեան երկու ուսուցիչներու՝ խմբավար Վարուժան Մարգարեանի եւ դաշնակահար Վաչէ Շարաֆեանի ղեկավարութեամբ խմբերգեցին: Ապա՝ Հոգ. Տ. Գուսան Վրդ. ներկայացուց տեսչական տեղեկագիրը, եւ ուսումնական մարզէն բացի յիշատակեց մրցանակներ որոնք տրուեցան Ուսմուն-

քի, Վարժ ու Բարքի, Ծառայասիրութեան, Մաքրութեան եւ Մարգանքի մէջ առաջին հանդիսացողներուն: Մրցանակներու նուիրատու յիշուեցան Երուսաղէմի հայ Բարեսիրաց Միութիւնը, Տէր. Բերկրուհի Սվաքեանը եւ Ամանուն նուիրատու մը:

Ժառ. Վարժարանի Զ. դասարանէն հինգ աշակերտներ շրջանաւարտ եղան, եւ յաջորդ տարեշրջանին պիտի կազմեն Ընծայարանի Ա. դասարանը:

Պատրիարք Սրբազան Հայրը իր փակման խօսքին մէջ գոհունակութիւն յայտնեց կարն ժամանակուան ընթացքին ձեռք բերուած արդիւնքին համար, հակառակ գիշերօթիկ դպրոցի մը յատուկ բոլոր անխուսափելի հարցերուն: Յիշեց որ ցորենին հետ միշտ որովք պիտի բուսնի: Բայց կ'ակնկալեմք, ըսաւ, որ ձիւք եւ շնոհք ունեցող տղաքը թիւով շատանան եւ ոչ թէ նուազին, հոգիով զօրանան եւ ոչ թէ նուազին ու թուանան, եւ իրենց շրջապատին վրայ ազդեն եւ ոչ թէ ազդուին իրենց շրջապատէն:

Ս. Աթոռոյ օրհներգով եւ խմբովին երգուած "Հայր Մեր"ով հանդէսը ւարտեցաւ ժամի 9ին:

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի շրջանաւարտներուն ի պատիւ Երուսաղէմի Հայ Երիտասարդաց Միութիւնը (Յունիս 10ին) եւ Հայ Օգնութեան Միութիւնը (Յունիս 14ին) իրենց ակումբի սրահներուն մէջ նաշկերոյթով եւ նուէրներով պատուեցին շրջանաւարտները: Իւրաքանչիւր ակումբի պատրաստած յայտագրով, եղան երգ, արտասանութիւն, նուագախումբով երաժշտութիւն, մաղթանքի խօսքեր՝ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր, Տեսուչ Սրբազանին եւ շրջանաւարտներուն կողմէ: